

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 3

Խնճի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Զեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տախս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Զեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

## Ա մակարդակ

1 Ինչո՞վ են բույսերը տարբերվում սնկերից.

- 1) անսեռ բազմացում իրականացնելու ունակությամբ
- 2) բջջում էնդոպլազմային ցանցի, Գոլցի ապարատի, ոիբոստմների առկայությամբ
- 3) բջջապատիքային բաղադրությամբ
- 4) բջջում պլաստիդների բացակայությամբ

2 Ո՞ր բջջների շնորհիվ է արմատն աճում երկարությամբ.

- 1) բաժանման և աճման գոտու բջջների
- 2) աճման գոտու և ուղեկից բջջների
- 3) անորոշների, մաղանման խողովակների և բաժանման գոտու բջջների
- 4) ծայրապատյանի և բաժանման գոտու բջջների

3 Ո՞ր բջջներն են մահացած.

- 1) լուրային թելիկները և խցանի բջջները
- 2) լուրային թելիկները և ուղեկից բջջները
- 3) լուրի, հիմնական հյուսվածքի բջջները և բնափայտի անորոշները
- 4) բնափայտի անորոշները, լուրի մաղանման խողովակները

4 Ո՞ր պնդումն է ճիշտ կոճղարմատի համար.

- 1) գլխավոր արմատի ձևափոխություն է
- 2) ունի ծայրապատյան և հավելյալ արմատներ
- 3) ձևափորվում է հավելյալ արմատների և ցողունի գերաճի շնորհիվ
- 4) ունի օղակածև դասավորված կամբիումի շերտ և տերևանութային բողբոջներ

5 Ինչի՞ց է կազմված գեներատիվ բողբոջը.

- 1) աճման կոնից, սաղմնային ցողունիկից, սաղմնային տերևիկներից և թեփուկներից
- 2) սաղմնային ծաղիկներից և թեփուկներից
- 3) աճման կոնից, սաղմնային տերևիկներից և ծաղկաբույլերից
- 4) սաղմնային ցողունիկից, թեփուկներից և սաղմնային ծաղիկներից

6 Ո՞ր նյութերն են կուտակվում հողաբափիկ-ինֆուզորիայի կծկվող վակուումներում.

- 1) սննդի մարման արդյունքում առաջացած պիտանի նյութերը և ջրի ավելցուկը
- 2) ածխաթթու գազը
- 3) սննդի չմարսված մնացորդները
- 4) նյութափոխանակության հետուկ արգասիքները

7 Ո՞ր պնդումն է ճիշտ թևավոր միջատների համար.

- 1) հետազոտման զարգացումն անուղղակի է
- 2) գլխի վրա ունեն երկու գույզ ճյուղավորված թեղիկներ
- 3) բոլորն ունեն պարզ և բարդ աչքեր
- 4) ունեն երեք հատվածներից բաղկացած երեք գույզ վերջույթներ

(77-78) Մարդկանց կատարակտը և բազմամատությունը ժառանգվում են որպես առատուտմային դոմինանտ շղթայակցված հատկանիշներուն: Կինը, որի մայրը նշված հատկանիշներով առողջ էր, իսկ հայրը տառապում էր իր հորից ժառանգած երկու արատներով, ամսունացել է բազմամատ տղամարդու հետ, որը բազմամատությունը ժառանգել է հորից: Նրանց առաջին երեխան հեմոֆիլիկ էր: Ընդունել, որ հոմոլոգ քրոմոսոմների միջև տրամախաչում տեղի չի ունենում (Պատասխանը կլորացնել մինչև ամբողջական մասը):

77 Որոշել այդ ընտանիքում նորմալ արյան մակարդելիություն ունեցող, կատարակտով հիվանդ բազմամատ երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

78 Որոշել այդ ընտանիքում հեմոֆիլիայով տառապող երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

(79-80) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու բոքերում արյան մեջ դիֆուզվել է 842,4լ քրվածին: Ընդունել, որ աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2,5 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 1,4, իսկ սիստոլային ծավալը՝ 1,6 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում շնչառական օդի ծավալը 600 մլ է, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ., իսկ սիստոլային ծավալը՝ 70 մլ (Պատասխանը կլորացնել մինչև ամբողջական մասը):

79 Քանի՞ ժամ է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

80 Որոշել մեկ օրվա ընթացքում քանի՞ մլ արյուն է ստացել մեկ նեֆրոնը, եթե երիկամները ստանում են մեծ շրջան մղված արյան ծավալի 20 %-ը:

(74-76) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում ծախսվել է 216 մոլ O<sub>2</sub> և մնացել է 58 մոլ կարբոքսիլ (Պատասխանը կլորացնել մինչև ամբողջական մասը):

74 Քանի՞ մոլ գլյուկոզ է ճեղքվել:

8 Ինչո՞վ են տարբերվում երկենցաղներն այլ ցամաքային ողնաշարավորներից.

- 1) եռախորշ սրտի և կոյանոցի առկայությամբ
- 2) ոչ լրիվ միջնապատով եռախորշ սրտի և հատվածավոր զույգ վերջույթների առկայությամբ
- 3) մերկ մաշկով և արտաքին բեղմնավորմամբ
- 4) փակ արյունատար համակարգի և արյան շրջանառության մեջ շրջանի առկայությամբ

9 Ω՞ր հատկանիշն է առաջին անգամ ի հայտ եկել սողունների մոտ.

- 1) կենդանածնությունը
- 2) թոքային շնչառությունը
- 3) ներքին բեղմնավորումը
- 4) կրծքավանդակը

10 Ինչո՞ւ թռչունների զարկերակային արյունը չի խառնվում երակային արյան հետ.

- 1) ունեն քառախորշ սիրտ և առրտայի միայն աջ աղեղ
- 2) ունեն արյան շրջանառության երկու շրջան և քառախորշ սիրտ
- 3) առրտայի աջ և ձախ աղեղները բաժանում են զարկերակային և երակային արյան հուները
- 4) առրտայի ձախ աղեղով հոսում է զարկերակային արյուն, իսկ թոքային ցողունով՝ երակային

11 Ինչո՞վ է վերջանում ռեֆլեքսային աղեղը.

- 1) գործարկող օրգանով
- 2) զգայական նեյրոնով
- 3) ընկալիչով
- 4) ներդիր նեյրոնով

12 Մարդու ո՞ր անորոշում է զարկերակային արյունը վերածվում երակայինի.

- 1) օրգանիզմի բոլոր մազանոթներում և երակներում
- 2) արյան շրջանառության մեծ շրջանի մազանոթներում
- 3) արյան շրջանառության փոքր շրջանի մազանոթներում
- 4) թոքային երակներում և արյան շրջանառության մեծ շրջանի մազանոթներում

13 Մարդու մաշկի ո՞ր կառույցներն են կատարում արտազատության ֆունկցիա.

- 1) վերնամաշկը
- 2) մազանոթները
- 3) քրտնքագեղձերը
- 4) մազերը

14 Ω՞ր ֆունկցիան է իրականացնում լեղին մարդու օրգանիզմում.

- 1) ճարպալույծ վիտամինների ներծծման ճնշում
- 2) աղիների պատի մկանների շարժողական ակտիվության թուլացում
- 3) ճարպերի ֆերմենտացին ճեղքում
- 4) տասներկումատնյա աղիքում հիմնային միջավայրի ստեղծում

15

Ո՞ր խմբի արյուն ունեցող մարդկանց օրգանիզմում չեն սինթեզվում ոչ  $\alpha$ , ոչ  $\beta$  ագլուտիններ.

- 1) չորրորդ
- 2) առաջին
- 3) երկրորդ
- 4) երրորդ

16

Մարդու գլխուղեղի ո՞ր քաժինն է ապահովում շնչառական շարժումների կամային կարգավորումը.

- 1) միջակա ուղեղը
- 2) երկարավոն ուղեղը
- 3) ծայրային ուղեղի կեղևը
- 4) ուղեղիկի կեղևը

17

Որքա՞ն հեղուկ է գոլորշիանում մարդու օղատար ուղիների մակերևույթից մեկ օրում.

- 1)  $0,5\text{L}$
- 2)  $0,5\text{L}-0,8\text{L}$
- 3)  $1,5\text{L}$
- 4)  $1,5\text{L}-2,5\text{L}$

18

Ո՞ր նյարդերի գրգռումն է ակտիվացնում ջերմակարգավորման և դանդաղեցնում մարսողության գործընթացները, մեծացնում սրտի կծկումների ուժը.

- 1) ուղեղիկից դուրս եկող նյարդերի
- 2) մարմնական նյարդային համակարգի
- 3) պարասիմպաթիկ նյարդային համակարգի
- 4) սիմպաթիկ նյարդային համակարգի

19

Ո՞ր դեպքում է մարդու անընկալունակ ախտածին հիվանդությունների նկատմամբ.

- 1) եթե արյան մեջ ներզատվում է մեծ քանակությամբ աղբենալին
- 2) եթե ունի նյութափոխանակության բարձր ինտենսիվություն
- 3) եթե արյան մեջ պարունակվում են մեծ քանակությամբ էրիթրոցիտներ
- 4) եթե արյան մեջ պարունակվում են հակամարմիններ

20

Ո՞ր գեղձն է արտադրում հանքային փոխանակությունը կարգավորող, արյան ճնշումը բարձրացնող և սեռական հորմոններ.

- 1) սեռական գեղձը
- 2) մակուդեղը
- 3) մակերիկամը
- 4) վահանագեղձը

21

Որտե՞ղ է ձևավորվում երկրորդային մեզը.

- 1) միզային խողովակներում
- 2) երիկամային մարմնիկում
- 3) երիկամային ավազանում
- 4) միզածորաններում

(71-73) Գենում ( $\text{Ա}+\text{Թ}$ )/(Գ+Ց) քանակական հարաբերությունը հավասար է 1,6-ի: Գենը կորավորում է սպիտակուց, որի մոլեկուլային զանգվածը 102960 ա.մ. է:

71

Որոշել գենում նուկլեոտիդների թիվը: Հաշվի առնել, որ մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 120 ա.մ. է:

- 1) 1716
  - 2) 5148
  - 3) 2574
  - 4) 2059
- 72
- Որոշել գենում աղենինային նուկլեոտիդների թիվը:
- 1) 792
  - 2) 1584
  - 3) 528
  - 4) 634

73

Քանի՞ վայրկյանում է սինթեզվել այդ սպիտակուցը, եթե պոլիպեպտիդային շղթային մեկ ամինաթթու միացնելու համար ծախսվում է 0,2 վրկ:

- 1) 514,8
  - 2) 171,5
  - 3) 171,4
  - 4) 85,8

4

17

67

**Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները.**

- A. լրացականության սկզբումքն ընկած է մի քանի ամինաթրումերի փոխազդեցության և սպիտակուցի առաջնային կառուցվածքի ձևակրնան հիմքում
  - B. սպիտակուցի սինթեզն ընթանում է տրամակրիպցիայի և տրամալյացիայի փուլերով
  - C. տրամալյացիան ժառանգական տեղեկատվությամբ փոխանակվելու ձև է
  - D. տրամալյացիան ԴՆԹ-ից ի-ՈՒՆԹ-ի վրա ժառանգական տեղեկատվության փոխանցման գործընթաց է
  - E. Սորգանի օրենքը վերաբերվում է գեների շղթայակցմանը
  - F. առաջին սերմորում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերօզիգոտ է
  - G. շղթայակցման խմբերի թիվը համապատասխանում է քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմին
- 1) CDEF
  - 2) ACDF
  - 3) ACDG
  - 4) BCEG

68

**Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները.**

- A. նուկլեինաթրումերի մոնոմերներ են հանդիսանում ազոտական հիմքերը, մոնոսախարիդները՝ ոլորզը կամ դեօքսիֆրոզը, և ֆուֆորական թքուն
  - B. ԴՆԹ-ն երկշրա մոլեկուլ է, որի շղթաները միացած են բազմաթիվ ջրածնային կապերով
  - C. գլիկոզենը և խտինը պղլիսախարիդներ են և պաշարվում են բոլոր տիպի բջիջներում
  - D. լակտոզը, գլյուկոզը և ֆրուկտոզը պտուղների քաղցր համը պայմանավորող պարզ շաքարներ են
  - E. ածխաջրերին հատուկ են կառուցղական և էներգետիկ ֆունկցիաներ
  - F. գլյուկոզը թաղանթանյութի, օպայի և գլիկոզենի մոնոմերն են
  - G. ԴՆԹ-ն բոլոր կենդանի օրգանիզմներում կատարում է տեղեկատվական ֆունկցիա
- 1) ACE
  - 2) CDG
  - 3) BCDF
  - 4) ACDG

(69-70) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում անջատվել է 806 մոլ ջուր: Ճեղքման թթվածնային փուլում էներգիայի կորուստը կազմել է 20880 կՋ:

69

**Որքա՞ն է էներգիայի կորուստը գլիկուլիզի պրոցեսում (կՋ-ով):**

- 1) 4000
- 2) 2000
- 3) 6000
- 4) 3000

70

**Որոշել ամբողջ պրոցեսի օգտակար գործողության գործակիցը (%-ով):**

- 1) 54,2
- 2) 53,36
- 3) 50,21
- 4) 53,9

22

**Ո՞ր կառուցվածքային տարրերը չեն մտնում մարդու համային կոճղեղի կազմի մեջ.**

- 1) մագակազմ բջիջները
- 2) համազգաց մազիկները և հիմային բջիջները
- 3) համազգաց և հենարանային բջիջները
- 4) միկրոմազիկները և հենարանային բջիջները

23

**Բջջի ո՞ր օրգանիզմներն են կազմում կմախքը.**

- 1) թարթիչները և մտրակները
- 2) Գոլցիի ապարատը և ցենտրիոլները
- 3) զույգ ցենտրիոլները և թելիկները
- 4) մանրագույն խողովակները և թելիկները

24

**Ո՞ր կապերով են միանում նուկլեոտիդները պոլինուկլեոտիդում.**

- 1) կովալենտ և ջրածնային
- 2) ջրածնային և ոչ կովալենտ
- 3) երկսուլֆիդային և իոնային
- 4) պեստիդային և հիդրոֆոր

25

**Կառուցվածքային ո՞ր բաղադրյալներն են առկա բջջի ինտերֆակային կորիզում.**

- 1) կորիզահյուր, ցենտրիոլներ և թաղանթ
- 2) կորիզակներ և քրոմատին
- 3) քրոմատին և ցենտրիոլներ
- 4) կորիզահյուր և նիստեր

26

**Ո՞ր գործընթացներն են սպիտակուցի կենսահների փուլեր.**

- 1) տրամակրիպցիա, տրամալյացիա
- 2) ԱԵՖ-ի սինթեզ, ԴՆԹ-ի կրկնապատկում, տրամալյացիա
- 3) ԱԵՖ-ի կուտակում, ֆերմենտների սինթեզ
- 4) ԴՆԹ-ի կրկնապատկում, տրամակրիպցիա

27

**Որտե՞ղ է իրականանում էներգետիկ փոխանակության անթրվածին փուլը.**

- 1) ցիտոպլազմայում
- 2) միտոքոնդրիումում
- 3) ողորկ էնդոպլազմային ցանցի վրա
- 4) Գոլցիի ապարատում

28

**Ինչո՞ւ է քեմոփենթեզը տարրերվում ֆոտոսինթեզից.**

- 1) սինթեզվում են օրգանական նյութեր անօրգանականներից
- 2) պլաստիկ փոխանակության ունակցիաների ամրողություն է
- 3) օգտագործվում է օրգանական նյութերի օքսիդացման էներգիան
- 4) օգտագործվում է անօրգանական նյութերի օքսիդացման էներգիան

29 Արյան խումբը որոշող ալելային գեներից ո՞րն է դոմինանտ.

- 1) 0-ն դոմինանտ է A-ի նկատմամբ, իսկ A-ն՝ B-ի
- 2) A-ն դոմինանտ է 0-ի նկատմամբ
- 3) 0-ն դոմինանտ է A-ի նկատմամբ
- 4) 0-ն դոմինանտ է B-ի նկատմամբ

30 Ինչո՞վ է պայմանավորված ջրի որպես լավ լուծիչ հանդես գալը.

- 1) ջուրն օժտված է բարձր ջերմունակությամբ
- 2) ջրի մոլեկուլներն ունեն փոքր չափսեր
- 3) ջուրն ունի ջրածնային կապերով ձևավորված կանոնավոր կառուցվածք
- 4) ջրի մոլեկուլները քեռացված են

31 Ո՞ր օրգաններն են ձևավորվում էնսողերմից

- 1) մկանները, ոսկրները և ներզատական գեղձերը
- 2) խոհկները և բուն մաշկը
- 3) թոքերը, խոհկները և լողափամփուշտը
- 4) լյարդը, երիկամները և արյունատար անոթները

32 Ո՞ր հատկանիշով կարելի է տարբերել մեյոզի առաջին բաժանման անաֆազը.

- 1) դրստր քրոմատիդների տարամիտումով
- 2) հոմոլոզ քրոմոսոմների կոնյուգացիայով
- 3) հոմոլոզ քրոմոսոմների տարամիտումով
- 4) երկու հապլոիդ կորիզների շուրջ կորիզաբաղներների ձևավորումով

33 Ո՞ր նյութի կառուցվածքը կամ քանակն է միշտ փոխվում մուտացիոն փոփոխականության դեպքում.

- 1) փ-ՌՆԹ-ի
- 2) սպիտակուցի
- 3) ի-ՌՆԹ-ի
- 4) ԴՆԹ-ի

34 Վեգետատիվ բազմացման եղանակով ստացված բույսերի համար ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) դրսերվում է համակցական փոփոխականություն
- 2) այդ բույսերի մոտ ի հայտ են գալիս բազմաթիվ նոր հատկանիշներ
- 3) այդ բույսերն ավելի լավ են հարմարվում նոր պայմաններին
- 4) ստացված բույսերը ձևավորվում են բջիջների միայն միտոտիկ բաժանման արդյունքում

35 Ինչպե՞ս են կոչվում միևնույն հատկանիշի հակառիք դրսերումները պայմանավորող գեները.

- 1) առտոսումային
- 2) ալելային
- 3) ոչ ալելային
- 4) դոմինանտ

64 Ո՞ր շարքում են նշված մարդու սրտի աշխատանքին վերաբերվող բոլոր սխալ պնդումները.

- A. կծկման ժամանակ աջ նախարսում զարգանում է 4-5 մմ ս.ս. ճնշում
- B. ձախ նախարսի և ձախ փորոքի միջև գտնվող փականը բաղկացած է երեք թերթիկներից
- C. արտայի կիսալուսնաձև փականներից վեր սկիզբ են առնում սիրտը սնուցող երկու պասկաձև երակներ
- D. սրտի աշխատանքն արագացնում են մակերիկամների արտադրած հորմոնը և կալցիումի իոնները
- E. սրտի յուրաքանչյուր կծկման ժամանակ շրջանառության է մդվում 65-70 մլ արյուն
- F. սրտի կծկումների հաճախության արագացումն իրականացվում է փորոքների կծկման տևողության կրծատման միջոցով
- G. հարաբերական հանգստի վիճակում չափահաս մարդու սիրտը մեկ րոպեում կծկվում է 70-75 անգամ

- 1) BCDG
- 2) ABEF
- 3) BCEF
- 4) CDFG

65 Ո՞ր շարքում են մարդու մաշկին վերաբերվող բոլոր սխալ պնդումները.

- A. մաշկով հեռացվում է օրգանիզմի ջերմության ավելցուկի 70-80%-ը
- B. ջերմարնկալիչների գրգռման դեպքում ռեֆլեքտորն փոխվում է արյունատար անոթների լուսանցքը
- C. ճարպագեղձերի ընդհանուր քանակը 2-2,5 մլն է
- D. ճարպագեղձերը բշտիկային պարզ գեղձեր են
- E. բուն մաշկում տարբերում են վերին նոսր՝ ցանցավոր և ստորին՝ խիտ պտկային շերտեր
- F. վերնամաշկում գտնվում են գունանյութ պարունակող բջիջներ, ընկալիչներ, արյունատար անոթներ
- G. ենթամաշկային բջանքը կազմված է մկանաթելերի ցանցից, որի օղակներում գտնվում են ճարպային բջիջները
- 1) BEFG
- 2) CEFG
- 3) BCDG
- 4) ACDF

66 Ո՞ր շարքում են բոլոր սխալ պնդումները.

- A. սեռական բազմացում կարող է իրականացնել մեկ օրգանիզմ
- B. սեռական բազմացման ժամանակ նոր օրգանիզմը միշտ զարգանում է զիգոտից
- C. սպորներով բազմանում են բույսերը, սնկերը, բակտերիաները և որոշ կենդանիներ
- D. սեռական բազմացումը համակցական փոփոխականության արդյունք է
- E. անսեռ բազմացման արդյունքում ստացվում է գենոտիպորեն և ֆենոտիպորեն նման սերունդ
- F. բույս հերմաֆրոդիտ օրգանիզմները բազմանում են միայն ինքնարեղմնավորման միջոցով
- G. ծաղկավոր բույսերին բնորոշ է կրկնակի բեղմնավորումը
- 1) ACEG
- 2) ACFG
- 3) BCDF
- 4) BDEF

61

**Ո՞ր պնդումն է ճիշտ: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.**

- A. կենդանի օրգանիզմներն իրականացնում են միայն օրգանական միացությունների քայլայում
  - B. առանձնյակների, պոպուլյացիաների, տեսակների վրա ազդող անկենդան և կենդան բնության բոլոր գործոններն անվանում են արիոտիկ
  - C. միևնույն և տարրեր տեսակների առանձնյակների փոխագրեցությունները դասվում են բիոտիկ գործոններին
  - D. ջրավազանի ջրում պարունակվող նյութերն անընդհատ վերափոխվում են արեգակնային էներգիայի ներգործությամբ
  - E. կենդանի նյութում ընթացող քիմիական ռեակցիաներին բնորոշ է կարգավորվածությունը
  - F. կենդանի նյութին բնորոշ է արագ տարածվելու և կյանքի համար պիտանի տարածքներ գրավելու հատկությունը
  - G. կենդանի նյութը ներառում է բոլոր կենդանի օրգանիզմների, դրանց կենսագործունեության արդյունքում առաջացած օրգանական և հանքային նյութերի գումարային զանգվածը
- 1) CFG
  - 2) CEF
  - 3) ABD
  - 4) AEF

62

**Տեսակների միջև գործող ո՞ր հարաբերություններն են օգտակար միայն մեկ կողմի համար: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.**

- A. կոռուպտացիան
  - B. չեղոքությունը
  - C. կոմենսալիզմը
  - D. մուտուալիզմը
  - E. մակարությունը
  - F. գիշատչությունը
  - G. ամենասալիզմը
- 1) ABE
  - 2) ACD
  - 3) BFG
  - 4) CEF

63

**Ինչո՞վ են բակտերիաների քջիջները տարբերվում բույսերի քջիջներից: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.**

- A. պլազմային թաղանթի առկայությամբ
  - B. քջապատի առկայությամբ
  - C. թաղանթային կառույցների բացակայությամբ
  - D. միտոքոնդրիումների բացակայությամբ
  - E. պլաստիների բացակայությամբ
  - F. ռիբոսոմների առկայությամբ
  - G. էնոպլազմային ցանցի բացակայությամբ
- 1) AEG
  - 2) BCD
  - 3) BFG
  - 4) DEG

36

**Ո՞ր օրգանիզմի հետ են իրականացնում խաչաերումը դոմինանտ հատկանիշներ ունեցող ֆենոտիպորեն նման օրգանիզմների գենոտիպը պարզելու համար.**

- 1) իրականացնում են ինքնափոշոտում
- 2) հետերոզիգոտ
- 3) ըստ դոմինանտ հատկանիշի հոմոզիգոտ
- 4) ըստ ռեցեսիվ հատկանիշի հոմոզիգոտ

37

**Ինչո՞ւմ է կայանում սեռական բազմացման առավելությունն անսեռի նկատմամբ.**

- 1) արտաքին պայմանների ազդեցության նկատմամբ սերունդների ավելի փոքր զգայունությամբ
- 2) բնութագրվում է մեծ բեղունությամբ և ծնողական առանձնյակներին սերունդի նմանությամբ
- 3) բնութագրվում է սերունդների գենոտիպերի մեծ բազմազանությամբ
- 4) բազմացման ավելի մեծ հավանականությամբ

38

**Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի շնորհիվ են երկրակեղևում առաջացել կրաքարի կուտակումներ.**

- 1) վերաբռնադրության
- 2) էներգիական
- 3) միջավայրագոյացնող
- 4) խտացնող

39

**Ի՞նչն է կազմում կենսոլորտի կենդանի նյութը.**

- 1) մոլորակի բազմաբջիջ և միաբջիջ օրգանիզմների ամբողջությունը
- 2) մոլորակի մանրէների, սնկերի և կենդանիների ամբողջությունը
- 3) մոլորակի մանրէների և բույսերի ամբողջությունը
- 4) մոլորակի կենդանի օրգանիզմների ամբողջությունը

40

**Ինչի՞ն է նպաստում շարժական բնական ընտրությունը.**

- 1) միջտեսակային կապերի բնույթի փոփոխմանը
- 2) միջավայրի պայմանների փոփոխմանը
- 3) հասկանիշի միջին արժեքի շեղմանը
- 4) գենոտիպի հաստատունության պահպանմանը

41

**Ինչո՞վ է պայմանավորված պոպուլյացիայում գեների հաճախականության ուղղորդված փոփոխությունը.**

- 1) բնական ընտրությամբ
- 2) համակցական փոփոխականությամբ
- 3) գենային մուտացիաներով
- 4) քրոմոսոմային մուտացիաներով

42

**Ո՞ր ֆունկցիան են իրականացնում բակտերիաները՝ ներգրավվելով կենսոլորտում նյութերի շրջապտույտին.**

- 1) մասնակցում են հողում առկա ռադիոակտիվ նյութերի չեղոքացմանը
- 2) մասնակցում են կրաքարերի առաջացմանը
- 3) մասնակցում են մթնոլորտում օգնային շերտի ձևավորմանը
- 4) քայլայում են օրգանական նյութերը մինչև անօրգանականը

43 Ո՞ր օրգանիզմների մոտ չի հանդիպում գիշատչությունը.

- 1) կենդանիների
- 2) բույսերի և վիրուսների
- 3) բակտերիաների
- 4) սնկերի և բակտերիաների

44 Ինչո՞վ են պայմանավորված պոպուլյացիաների թվաքանակի պարբերական տատանումները.

- 1) բնական աղետներով
- 2) ժառանգական փոփոխականությամբ
- 3) ոչ ժառանգական փոփոխականությամբ
- 4) գոյության կովով

45 Ինչպե՞ս են անվանում սննդային պաշարների համար գոյության կովին մասմակցող նույն ցեղին պատկանող տեսակների փախհարաբերությունները.

- 1) մրցակցություն
- 2) կոռպերացիա
- 3) ամենալիզմ
- 4) մակարուծություն

46 Ո՞ր օրգանիզմների գործունեության արդյունքում է առաջանում մթնոլորտային ազոտը.

- 1) բակտերիաների
- 2) խոտաբույսերի
- 3) գլխարկավոր սնկերի
- 4) վիրուսների

(47-48) Օրվա ընթացքում մաշկի մակերևույթից ջերմաճառագայթմամբ հեռացել է 1500 կԶ էներգիա:

47 Որոշել այդ ընթացքում որքա՞ն ջերմային էներգիա է հեռացվել ջերմահաղորդման եղանակով:

- 1) 500
- 2) 375
- 3) 750
- 4) 1200

48 Քանի՞ մգ քրտինք է հեռացվել այդ ընթացքում 1սմ<sup>2</sup> մակերեսից, եթե մաշկի մակերեսը 1,6ս<sup>2</sup> է: Հաշվի առնել, որ 1գ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կԶ էներգիա:

- 1) 9,57
- 2) 12,81
- 3) 12,76
- 4) 38,42

58 Ինչախիսի՞ն է գործնթացների հաջորդականությունը կենսոլորտում ածխածնի շրջապտույտում՝ սկսած անկենդան բնությունից կենդան բնություն անցումից: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. օսլայի առաջացում բուսական բջիջներում
- B. ածխաթրու գազի առաջացում կենդանու շնչառության ընթացքում
- C. գլիկոզենի առաջացում կենդանական բջիջներում
- D. գլյուկոզի առաջացում բուսական բջիջներում
- E. գլյուկոզի առաջացում կենդանական բջիջներում
- F. ածխաթրու գազի կապում ֆոտոսինթեզի ընթացքում
- G. ԱԵՖ-ի սինթեզ ֆոտոսինթեզի ընթացքում

- 1) GFDCAEB
- 2) GFADCEB
- 3) GFDACEB
- 4) GDFACEB

59 Ո՞ր գործնթացը բնորոշ չէ շարժական բնական ընտրությանը: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. բազմազան ժառանգական փոփոխությունների առաջացում պոպուլյացիայում
- B. ներտեսակային և միջտեսակային գոյության կրվի վերացում
- C. գոյության կորիվ անկենդան բնության անբարենպատ պայմանների դեմ
- D. ռեակցիայի նորմայի նեղացում
- E. հարմարվածության վերացում
- F. գերազանցապես տվյալ պայմաններում օգտակար ժառանգական
- G. տեսակառաջացման դանդաղում

- 1) DEF
- 2) BDG
- 3) ACE
- 4) ABG

60 Մասնակցելով կենսոլորտում նյութերի շրջապտույտին ո՞ր գործնթացներն են իրականացնում կենդանիները: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները.

- A. նպաստում են ածխաթրու գազի և թթվածնի կուտակմանը մթնոլորտում
- B. օգտագործում են մթնոլորտի թթվածինը
- C. նպաստում են տարրերի անցմանը անկենդան բնությունից կենդան բնություն
- D. նպաստում են տարրերի անցմանը մի օրգանիզմի օրգանական նյութի կազմից մեկ այլ օրգանիզմի օրգանական նյութի կազմից
- E. ստեղծում են առաջնային արտադրամը
- F. նպաստում են անօրգանական ածխածնի պաշարների ավելացմանը
- G. մասնակցում են օգնային շերտի առաջացմանը

- 1) BFG
- 2) BDF
- 3) ABF
- 4) CDE

55

Ինչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձեմերի արյունատար համակարգում սկսած սիրտ մտնելու պահից: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. դեպի սիրտ տանող երակներ
  - B. փորային առտա
  - C. մեջքային առտա
  - D. նախասիրտ
  - E. խոիկային թերթիկների մազանոթներ
  - F. գլխողեղի մազանոթներ
  - G. փորոք
- 1) DGBEFCA
  - 2) GBCEFAD
  - 3) DGEBBCFA
  - 4) DGBECFA

56

Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում սնունդը քոչումի մարտղական համակարգի բաժիններով: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. ստամոքսի գեղձային բաժին
  - B. բարակ աղիք
  - C. կերակրափող
  - D. կոյանոց
  - E. թերան
  - F. կտնառը
  - G. ստամոքսի մկանային բաժին
  - H. ուղիղ աղիք
  - I. տասներկումստնյա աղիք
- 1) ECFAGIBHD
  - 2) EFCAGIBHD
  - 3) EFCGAIBHD
  - 4) ECFGAIIBHD

57

Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում օդը մարդու շնչառական համակարգով արտաշնչման ժամանակ: Ընտրել ճիշտ պատասխանը.

- A. շնչափող
  - B. քրի խոռոչ
  - C. քրոնիներ
  - D. քրոմպան
  - E. քոքարշտեր
  - F. կոկորդ
  - G. քրանցքեր
- 1) ECFADBC
  - 2) ECADFBG
  - 3) ECAFDBG
  - 4) EACFBDG

(49-50) Առանձնյակն ունի AaBbCcDdEeFF գենոտիպ: Ալելային գեների առաջին զույգը շղթայակցված է չորրորդի հետ, երկրորդը՝ երրորդի հետ: Դոմինանտ գեներն իրար են շղթայակցված, իսկ ոեցեսիվներն՝ իրար: Ընդունել, որ հոմոլոգ քրոմոսոմների միջև տրամադրաչում տեղի չի ունենում:

49

Քանի՞ տեսակի գամետներ կձևավորվեն առանձնյակի օրգանիզմում:

- 1) 2
- 2) 16
- 3) 8
- 4) 4

50

Քանի՞ տեսակի գամետներ կձևավորվեն օրգանիզմում, եթե նշված գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում:

- 1) 81
- 2) 16
- 3) 64
- 4) 32

**Բ մակարդակ**

51

Օրգանիզմների ո՞ր բնութագրիչը (նշված է ձախ սյունակում) էվոլյուցիայի ո՞ր ուղուն (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- |   |   |
|---|---|
| Բնութագրիչ  | Էվոլյուցիայի ուղին                                |
| A. հիմնականում կապված է մակարույժ կամ նստակյաց կենսակերպի անցնելու հետ  | 1. արոմորֆոզ<br>2. իդիոդապտացիա<br>3. դեգեներացիա |
| B. ծառաբնակ երկկենցաղների և սողունների մատների լայնացումների առաջացումը |   |
| C. հովանավորող գունավորման առաջացումը                                   |   |
| D. ցամաքային ողնաշարավորների մոտ հնգամատ վերջույթների առաջացումը        |   |
| E. բորային շնչառության և կմախքի առաջացումը                              |   |
| F. սեռական բազմացման առաջացումը   |   |
| G. ճանճների մոտ լիզող բերանային ապարատի առկայությունը                   |   |
- 1) A-3; B-2; C-2; D-1; E-1; F-1; G-2  
2) A-3; B-2; C-2; D-1; E-2; F-2; G-1  
3) A-2; B-2; C-2; D-1; E-3; F-1; G-3  
4) A-2; B-2; C-3; D-1; E-3; F-2; G-1

52

Ո՞ր ֆունկցիան (նշված է ձախ սյունակում) մարդու ծայրանասային նյարդային համակարգի ո՞ր բաժնի (նշված է աջ սյունակում) կողմից է իրականացվում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

- |   |  |
|---|--|
| Ֆունկցիա  | Ծայրանասային նյարդային համակարգի բաժին   |
| A. նյարդավորում է միջաձիգ զոլավոր մկանները                                  | 1. մարմնական նյարդային համակարգ<br>2. վեգետատիվ նյարդային համակարգի սինպարիկ բաժին |
| B. նվազեցնում է սրտի կծկման ուժը  | 3. վեգետատիվ նյարդային համակարգի պարասինվածարիկ բաժին                              |
| C. իրականացնում է կամային շարժումները                                       |  |
| D. բուլացնում է մարսողական համակարգի հարթ մկանների շարժողական ակտիվությունը |  |
| E. արագացնում է սրտի աշխատանքը  |  |
| F. բուլացնում է մարսողական համակարգի սեղմանները                             |  |
| G. ակտիվացնում է քրտնքագեղձերի աշխատանքը                                    |  |
- 1) A-1; B-3; C-2; D-2; E-3; F-3; G-2  
2) A-1; B-3; C-1; D-2; E-2; F-3; G-2  
3) A-3; B-3; C-3; D-2; E-3; F-1; G-3  
4) A-1; B-2; C-2; D-2; E-2; F-1; G-1

53

Ո՞ր գործընթացը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանոփում (նշված է աջ սյունակում) է իրականանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

| Գործընթաց   | Օրգանոփում       |
|---|------------------|
| A. միստերի թաղանթների վրա պրոտոնային պոտենցիալի առաջացում | 1. Գոլցիի ապարատ |
| B. ածխաթթու գազի և ջրածնի ատոմների առաջացում              | 2. միտոքոնդրիում |
| C. ֆոտոնի էներգիայի կլանում                               | 3. կորիզ         |
| D. պլազմային թաղանթի նորոգում և աճ                        | 4. քլորոպլաստ    |
| E. ջրի մոլեկուլից էլեկտրոնի անշատում                      |                  |
| F. ոիրոտմների ենթամիավորմների (մասերի) ձևավորում          |                  |
| G. բջջի բաժանման ժամանակ թաղանթի բայցայում                |                  |

1) A-2; B-4; C-4; D-1; E-2; F-3; G-2  
2) A-4; B-2; C-4; D-1; E-4; F-3; G-3  
3) A-4; B-1; C-4; D-2; E-4; F-3; G-3  
4) A-2; B-2; C-3; D-1; E-4; F-1; G-1

54

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ սյունակում) ժառանգման ո՞ր բնույթին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

| Հատկանիշ                   | Ժառանգման բնույթ                         |
|----------------------------|--|
| A. երկնագույն աչքեր        | 1. սերի հետ չկապված առևտոսմային հատկանիշ |
| B. ոնզուս դրական արյուն    | 2. սերի հետ շղթայակցված ժառանգում        |
| C. խոլ-համրություն         | 3. սեռով սահմանափակվող ժառանգում         |
| D. հիպերտրիխոզ             |  |
| E. հեմոֆիլիա               |  |
| F. պենանեների առկայություն |  |

1) A-1; B-2; C-3; D-2; E-1; F-2; G-1  
2) A-1; B-2; C-3; D-1; E-1; F-2; G-1  
3) A-1; B-1; C-3; D-1; E-3; F-2; G-1  
4) A-1; B-1; C-2; D-1; E-3; F-1; G-1